Արձանագրություն N 3

<<ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-19/14>> ծածկագրով Տեղեկատվության էլեկտրոնային փոխանցման ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 02.12.2019թ.
ժամը 10:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Ա. Գրիգորյան
Հանձնաժողովի անդամներ ՝	Ա. Ավագյան
	Գ. Գրիգորյան
	Շ. Իսախանյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Տ. Վասիլյան

Բացակայում էր՝

Հանձնաժողովի անդամ՝	Ն. Մկրտչյան

1. ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-19/14 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղն զբաղեցրած մասնակցի վերաբերյալ ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մասին

(Ա.Գրիգորյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ 22.11.2019թ. հարցում է ուղարկվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) գնման ընթացակարգի 1-ին տեղն զբաղեցրած մասնակցի՝ <<ՎԻ ԻՔՍ ՍՈՖԹ>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Մասնակից) հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն համաձայն որի՝ Մասնակիցն ունի 319,482 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություններ:

Համաձայն Կարգի 47-րդ կետի՝ 26.11.2019թ. նիստի արդյունքում որոշվել է ծանուցել Մասնակցին (կցելով Կոմիտեից ստացված տեղեկատվությունը) երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունը, ինչն էլ սահմանված ժամկետում արվել է վերջինիս կողմից:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

2. ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-19/14 ծածկագրով գնման ընթացակարգի հայտի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ա.Գրիգորյան)

2.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 6-րդ կետը, Կարգի 48-րդ կետը և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնման ընթացակարգի մասնակցի հայտի գնահատման արդյունքները և ընտրված մասնակից ճանաչել <<ՎԻ ԻՔՍ ՍՈՖԹ>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա.Գրիգորյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը, 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ գնահատող հանձնաժողովը որոշում է պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել սույն արձանագրության 2.1 կետում նշված մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա.Գրիգորյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Գրիգորյան

Անդամ՝ ---------- Ա. Ավագյան

---------- Գ. Գրիգորյան

---------- Շ. Իսախանյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Տ. Վասիլյան